



ՏԱՋԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ



ՏՆՕՐԷՆ - ԽՄԱԳԻՐ
ՋԱՐԲԱՅԻ ԳԱՀԱՆԱՅ ԿԵՁԻՒՐԵԱՆ


Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 12 ՄԱՐՏ 1911

ԹԻԻ 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք ՊԱՀՈՑ ԱՌԹԻԻ ԿՐՕՆ, ԽՈՐՀՐԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ.— (Գ.) Աղսթ. քի կեանքը	ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Պէտքն ու Պարտքը	ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
Այլ ու Հայ	ԳԱԶՐԻԿ
Համադասարին Շուրջը	
Տաճարներ (Քերթուած)	ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
Բաղէշի նորընտիր առաջնորդը.— Տ. Սուրէն Ն. Վ. Կալէմեան (եր պատկերով)	
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆԻՐ.— Շաբթուան լուրեր.	
Մենք Համերգ՝ ի նպաստ Հայ Երաժշտանոցի	



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ "ՇԱՆԹ"

9, Ճամի Դաբուառ, 9

ՂԱԼԱԹԻԱ

“ՏԱՃԱՐ,,Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուց
Արսասահմանի համար	10 ֆրանք
Ռուսիա	4 րուբլի
Ամերիկա	2 օղար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Տաղը բաժանորդը գտնուող իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու :

Իսկ չկող բաժանորդը գտնուող պիտի կրնայ մէկ թերթ ստանալ կէս բաժնեգինով :


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻԻՐԱՄՍՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պէտիքաւ, Հայոց եկեղեցի

در سعادتده بشکطاشده ارمنى کليساسنده (داجار) غزقهسى مدیرى باباس زارماير

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue « DADJAR »
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 12 ՄԱՐՏ 1911

ԹԻԻ 9

ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԹԻԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ.

ԱՂՕԹՔԻ ԿԵԱՆՔԸ

Հաւատացեալ հոգիներու կենսական անունդն է Աղօթքը: Հոգին երջանիկ է այնչափ, որչափ առողջարար է իր անունդը: Աղօթքի կեանքը՝ նոյն ինքն երջանկութիւնն է հոգիին:

Մեր խորհրդածութիւններուն առարկայ ընել կ'ուզեմ այսօր Աղօթքի այս կեանքը: Եւ ամէնէն յառաջ ուշադրութիւնս կը դրաւէ սա՛ իրողութիւնը թէ մեր մէջ չատ սխալ հասկացում է Աղօթքը, և այդ սխալ հասկացութեան արդիւնքով է՝ որ չենք կրնար աղօթքի կեանքը ապրիլ, վայելել հոգեկան երջանկութեան մը գոյութիւնը:

Ի՞նչ է աղօթքը, գիտե՞նք աղօթելու կերպը:— Շատ պարզ են այս հարցումները, պիտի ըսէք անշուշտ: Աղօթք, ո՞վ չգիտեր զայն. աղօթելու կերպը, այդ ալ դժուար բան մըն է: Չէ՞ որ Աստուծոյ բաներ մը խնդրելն է աղօթքը, եւ աղօթելու կերպերը շատ.— առնել, եկեղեցին աղօթելու հին, աւանդական կերպեր և

սովորութիւններ ունինք: Յայտնի բաներ են սառնք: Ահա՛ ընդհանրապէս գիտցուածը Աղօթքի մասին, ուր սակայն սխալներ կան:

Աղօթքի կեանքը նոյն ինքն հոգեւոր կեանքն է: Բայց մեր աղօթելու կերպերն ու սովորութիւնները բոլորովին նիւթաւ կանացուցած են Աղօթքը. աւրած ենք աւտոր հոգեւոր նկարագիրը: Մենք կ'աղօթենք նիւթապէս եւ նիւթական բաներու համար: Այսպէս չէ՞ իրողութիւնը.— Ի՞նչ է եկեղեցին, եւ մա՛նաւանդ ի՞նչ է եկեղեցւոյ մէջ մեր հաւաքուելու նպատակը, ի՞նչ են այս կանթեղները, այս մոմերը, ուխտաւորներու այս երթեւեկութիւնները, սովորական դարձած այս ծանուցումներով Տէր ողորմեաները, եւլն. եւլն.: Մենք կ'աղօթենք, որովհետեւ զուտ նիւթական պէտքեր եւ հոգեր ունինք. անոնք չենք կրցած կամ չենք կրնար ձեռք բերել մեր միջոցներով, եւ կը դիմենք Աստուծոյ, որպէս զի մեր չկրցածները ինքն ընէ, ինքը հրաշագործէ, որպէս զի մեր բոլոր անչանքներն ու բաղձանքները՝ իրաւ թէ աւնիրաւ, մեր բոլոր ուխտերը՝ միամիտ թէ նպատակաւոր, առանց բացառութեան կատարուին: Մեր գործերու անյաջողութիւնները, մեր հիւանդութիւնները, մեր երապ-

ները, մեր ակնկալութիւնները, մեր, մեր, մեր, լուրը մեր կեանքին այս անհատուած, անսպառ նիւթական պէտքերը, ասանք Աղօթք են մեզ համար, լուս եւս Աղօթքի նիւթերը: Մի՛ կարծէք սակայն, որ միայն մենք սխալ հասկըցած ենք Աղօթքը. առ հասարակ այսպէս հասկըցուած է Աղօթքը ամէն տեղ. ըստ իս կեանքի գծաւարտութիւնները մէկ կողմէն, հոգեւոր կեանքի անվարժութիւնները միւս կողմէն՝ նիւթական ըրած են. մարդոց կրօնասիրութիւնն ու բարեպաշտութիւնը: Մի՛ կարծէք նաեւ, որ ես այս թերութիւնները յայտնապէս մատնանիշ ընելով՝ դէմ կը խօսիմ բարեպաշտական արտաքին կերպերու եւ սովորութիւններու. ո՛չ, ընդհակառակը ես կ'ուզեմ որ բարեպաշտութիւնը անխառն ըլլայ նիւթականութենէ, մեր աղօթքները նիւթի շուրջ չդառնան, մեր կանթեղներն ու մոմերը չխորհրդաւորեն մեր տգիտութիւններն ու գաղտնի կամ յայտնի փառասիրութիւնները: Վասն զի այդպիսի Աղօթք մը՝ հիթանոսական է, այսինքն նիւթական է, քրիստոնէական չէ. եւ ցաւալի իրողութիւն մը պիտի հաստատէ այդպիսի Աղօթք մը, այսինքն թէ քրիստոնէութիւնը դեռ չէ գործադրուած իր ինչ ինչ սկզբունքներուն մէջ:

Նիւթական Աղօթքը եւ նիւթի համար եղած Աղօթքը դժբախտ կ'ընէ հաւատադատ: Երջանիկ կեանքի մը պայմաններուն կատարելապէս տգիտութիւն մը ննթադրել կուտայ նիւթական Աղօթքը: Հաւատացեալը չմխիթարուիր, կը տանջուի, կը սատանի՝ տեսնելով թէ իր ուխտերը քորացած են եւ իր աղօթքները չեն արդիւնաւորիր: Հոգին կը տուժէ, եւ խուլ թերահաւատութիւն մը կը սկսի սպականել եւ անխորոյցանել զինքը:

Իբր քրիստոնէայ հաւատացեալներ, որպէս զի կարող ըլլանք քրիստոնէական, լուս եւս քրիստոսեան Աղօթքը հասկնալ եւ համոզուիլ ըլլալ, կեանքը պէտք է դիտել Քրիստոսի աչքերով. ուրիշ խօսքով՝ կեանքին տալ իր իրական եւ իսկական արժէքը: Եւ կարծեմ թէ արդէն ես ձեզի լուսական քան թոյնաբեցի եւ հասկցուցի

այս մասին Երջանիկ կեանքի վրայ խօսելու տուն: Մարդը՝ պէտք չէ որ իր անձէն դուրս տեղ մը կամ պայմաններու մէջ փնտռէ երջանկութիւնը: Այս սկզբունքով կեանքին արժէքը պիտի պարզուէր եւ պիտի բարձրանար, եւ հաւատացեալները շատ ղիւրութեամբ պիտի ըմբռնէին Աղօթքին ալ արժէքը:

Մեր հոգեւոր կամ բարոյական պէտքերը նուազ կարեւոր չեն քան մարմնաւոր կամ նիւթական պէտքերը: Եւ մենք մեր երջանկութիւնը կը գտնենք մեր բարոյական պէտքերու գոհացումին մէջ. այնպէս որ, եթէ սեշադրութիւն ընենք, պիտի տեսնենք թէ նոյն իսկ մեր մարմնաւոր եւ նիւթական շատ մը պէտքերը արդիւնք են գէշ մշակուած հոգեւոր եւ բարոյական կեանքին. մեր բոլոր ձկտումները բարոյական են. նիւթով կը մարմնացնենք մեր բաղձանքները: Եւ այս է պատճառը նաեւ որ մեր աղօթքներն ալ կը նիւթականանան եւ կը կորսնցնեն իրենց հոգեւոր նկատարը:

Քրիստոս ալ Աղօթքին խմաստն ու կերպը այսպէս կը բացատրէ. ուտեստի եւ հագուստի համար չորժեր այնքան հոգ չնել. չէ՞ որ «Ոգի (այսինքն կեանքը) առաւել է քան զկերակուր, եւ մարմին՝ քան զհանդերձ»: Դուք ամէնէն յառաջ Աստուծոյ Արքայութիւնն ու անոր արդարութիւնը խնդրեցէք, եւ այդ բոլոր բաները ձեզի պիտի տրուին (Մատթ. 23, 25, 33): Քրիստոսի աչքերով դիտուած այսպիսի կեանքի մը արժէքը շատ տարբեր է մեր՝ Քրիստոնեաներուս՝ տուած արժէքէն: Մեզ համար համադամները, խաղն եւ սուղ կերակուրները աւելի կ'արժեն քան կեանքը, եւ կը կարծենք՝ որ գեղեցիկ հագուստներ կրնան անարժէք մարմիններու յարգ եւ արժէք տալ: Եւ ասոնց համար կ'աղօթենք: Ընդհակառակը, մտքուր եւ երջանիկ կեանքը կը գոհանայ չափաւորութեամբ, այսինքն բացարձակապէս պէտք եղածովը, ըլլայ ուտեստի կողմէն, ըլլայ հագուստի կողմէն:

Քրիստոնէական կեանքի համար ամէնէն առաջ պէտք եղածն է ուրեմն Աստուծոյ

թաղաւորութիւնն ու արդարութիւնը, մեր մնացած բոլոր պէտքերը պիտի հիմնուին այդ երկու սկզբունքներուն վրայ: Աւելին հեթանոսներն են որ կը փնտռեն, այսինքն անոնք, որ չեն լուսաւորուած կեանքի իրական արժէքին նկատմամբ, եւ կը կարծեն երջանիկ ըլլալ աւելորդներով, աւելորդներ՝ զորս ձեռք բերելու տենչանքն իսկ խիստ տունջանք մըն է մարդու համար: պատճառ մը՝ որ մարդ նիւթը հետապնդէ շարունակ, յոգնի, պարտաւոր, եւ թշուառ ըլլալ դառն պատրանքներու մէջ: Ասանք սխալներն են մեր Աղօթքին եւ աղօթելու կերպերուն, եւ անշուշտ ձերք մէջ շատեր, շատեր կը զգան սխալ աղօթքի մը պատճառած պարտասուածները:

Աղօթքի ուղիղ իմաստը հասկնալու համար, պէտք է չիտակ Փրկչին մօտենալ, Անոր աշակերտներուն պէս, որոնք ձանձրացած սխալ աղօթքներու ամբողջէն, մօտեցան իրենց Վարդապետին եւ ըսին. Դուն սովորեցուր մեզի աղօթելու կերպը: Բրիտանացի Հայր մեր սորվեցուց անոնց, սա մեր ամէն օր կրկնած եւ յեղեղած Հայր մեր: Ըսել է որ քրիստոնեաները Հայր մերի սկզբունքով պիտի աղօթեն. իրենց բոլոր ուխտերուն եւ աղաչանքներուն հիմը Հայր մեր պիտի ըլլայ, Հայր մեր իրենց մորմունքներն ու թրթուռները:

Այդ սկզբունքով քրիստոնեայն ամէնէն յատալ պիտի աշխատի Աստուծոյ թագաւորութիւնն ու արդարութիւնը ձեռք բերել. եւ ետքն է որ իր օրական հոգը, մարմնի անհրաժեշտ եւ կենսական պէտքերը յիշատակութիւն մը պիտի գտնեն Աղօթքին մէջ. վառն զի աւելի կծրեւոր բաներ կան. իր մեղքերը, ատանց թողութիւնը պիտի խնդրէ քրիստոնեայն, բայց Աստուծոյ չնկեր իրեն, մինչեւ որ ինքը չներէ իր ընկերին. պիտի աղծթէ նաեւ որ չիյնայ չար փորձանքներու մէջ:

Կը տեսնէք որ աղօթքին առանցքն է հոգեւոր կեանքը, բարոյական կեանքը: Հացի խնդիրը, մարմնի պէտքերը պէտք եղածին չափ միայն կը մտնեն աղօթքի մէջ: Աղօթքը նիւթական չէ Հայր մերի

մէջ, եւ քրիստոնեայն պէտք չէ որ աղօթէ նիւթի համար:

Աղօթքի մասին ստույգ եւ անսխալ գաղափար մը ունենալ՝ մեծագէտ պիտի փոխէր մեր հոգեւոր կեանքը, եւ մենք ճշգրտած, դիտակից վերաբերութիւն մը պիտի ունենայինք դէպ ի կրօնք եւ եկեղեցի: Տգէտներ, խաւարեալներ կամ նախապաշարեալներ պիտի չըլլայինք ոչ միայն հոգեւոր կեանքի, այլ նաեւ բնական անյեղլի օրէնքներու հանդէպ. շատ լու պիտի դիտնայինք թէ ի՞նչ է Աղօթքը:

Եթէ ուզէք քիչ մը վերլուծենք մեր աղօթելու սխալները:

Առաջուկն է ըսի արդէն, թէ մեր բուն սխալը Աղօթքը կոպելն է նիւթի հետ. հարստութիւն, հիւանդներու բժշկութիւն, յաջողութիւններ տեսակ տեսակ, եւ հազարումէկ ուրիշ պէտքեր, ամէնքն ալ նիւթական բաներ՝ իբր պայմաններ դիւրատար կեանքի մը: Բայց չենք խորհիր, թէ կարելի է այսպիսի ինդրուածներու համար հաստատական պատասխաններ ընդունիլ: Մենք իրաւունք ունինք մեր ոյժերէն, մեր յարմարութիւններէն աւելի բաներու փափաքել եւ անոնց իրականութեանը համար՝ քանի որ մենք անկարողներ ենք՝ դիմել Աստուծոյ ամենակարողութեան: Ինչ որ մենք չենք կրնար ընել պէտք է որ զայն Աստուծոյ ընել տալու միջոց մը ընենք Աղօթքը: Ահա այս է մեր սխալը. եւ այս սխալը այնքան ծանր, այնքան իրական, եւ այնքան հակառակ է Աղօթքի քրիստոնէական նշանակութեան եւ հասկըցողութեան, որ բայնախոհ քրիստոնեայ-իմաստասէր մը, աւելի համարձակ քայլեր կ'ունէ եւ կը յայտարարէ, թէ նոյն իսկ աւելորդ են Աղօթքի այսպայտութեան բոլոր արտաքին ձեւերն ու եղանակները, նոյն իսկ եկեղեցւոյ մէջ հաւաքումներ, պաշտամունք եւլն: Այսպիսինքն թէ՛ իրաւացի եւ թէ՛ չափազանց դիտողութիւնները սակայն ուղղուած են սխալ Աղօթքի դէմ, նիւթական Աղօթքի դէմ: Աղօթքը ոչ միայն նիւթական պիտի չըլլայ, այլ նաեւ հաւատացեալներ Աղօթքի միեւնոյն ոգիով, հոգեւոր աղօթքով թրթուռն

վիճակի մը մէջ պիտի վազեն եկեղեցին՝ հասարակայն պաշտամունքը չինիչ ընելու համար։ Եւ հոգեւոր կեանքի համար մահ-հրաժեշտ պէտք մըն է Եկեղեցին, եւ Եկեղեցւոյ բոլոր կարգն ու սուրբը պէտք է որ հաւատացեալներու աղօթքին հոգեւոր եւ բարոյական արժէքը արտայայտեն։

Մեծ դժբախտութիւն մըն է տեսնել, թէ հաւատացեալներու բազմութիւնը մէկ ոգիով չեն Եկեղեցւոյ մէջ, միեւնոյն սուրբ եւ մաքուր միտքը չառաջնորդեր անոնց սու հասարակ՝ Աղօթքի պահերուն, այլ ամէն ոք իր ցաւը, իր նիւթական ցաւը կուլայ, միտքերը ցրուած, ուշադրութիւնները տարտամ, աղաչանքները նիւթական։ Աղօթքի այս պիտիւնքէն կը հետեւի, որ եթէ ամէն ոք իր բաղձանքին համէն, եթէ Աստուած ամէն մարդու ուզածը հրաշագործէր, ոչ ոք այլեւս պէտք պիտի ունենար աղօթելու, կամ եթէ պէտք պիտի ունենար, դարձեալ նիւթական նոր նոր պէտքերու համար պիտի աղօթէր։ Մինչ բոլորովին ասոր հակառակն է որ պէտք է պատահէր, այսինքն հոգեւոր պէտքի համար աղօթելու էր, եւ մեր հոգեւոր պէտքերը ծայր եւ սահման չունին։ Աստուծոյ թաղաւորութիւնը, արդարութիւնը մըշտնջեալական պէտք մըն է հաւատացեալներու համար՝ աշխարհի մոլորութիւններուն եւ անիրաւութիւններուն մէջ։ Մեր կեանքին ու մարմնին արդար եւ անմիջական պէտքերը շատ գերազանց են երազային կեանքերէն եւ անդորրութիւններէն։ Սիրոյ կեանքը, ընկերոջ հետ սիրով ապրելու պէտքը՝ առաջին պայմաններէն է երջանկութեան։ Մեր հոգեկան խաղաղութեան համար, չար փորձութիւններէն զերծ եւ ազատ մնալու համար, անհրաժեշտ է հոգեւոր արթնութիւնը, բարոյական կորովը։ Եւ այս բոլորը հոգեւոր աղօթքի միախառնութիւններուն մէջ պիտի կրնայ գտնել հաւատացեալ մարդը։

Նիւթական աղօթքը գուրկ է այս միախառնութիւններէն։ Նիւթը նիւթ է, ուրիշ արժէք մը չունի։ Նիւթը մեր բարոյական ձգտումներուն չկրնար գոհացում տալ։ Մինք կ'աղօթենք, նիւթապէս, այսինքն

սխալ կ'աղօթենք, եւ այնչափ սխալ, որ երբ ընդունելի եղած է մեր աղօթքը եւ կատարուած է մեր խնդիրքը, չեմ կարծեր որ գոհութեան աղօթքներ մընջենք։ Շահագրգռական նկարագիր մը կուտանք աղօթքին, եւ ուրիշ կերպ չկրնար ըլլալ արդէն։ որչափ շահ կ'ակնկալենք, այնչափ կ'աղօթենք, երբ կը դադարի շահը, նիւթական ակնկալութիւնը, ա'լ պէտք չենք զգար աղօթելու։ Հոգեւոր աղօթքը՝ շահագրգռական չէ՝ երբեք։— Եւ այն ինքն հաւատացեալ հոգիներու բուրմունքն է այդ մշտնջեալու հախրանքն հոգեւոր կեանքի մը կատարելութիւններուն մէջ։

Թէ նիւթական Աղօթքը որչափ զէշ արմատացած է մարդոյ ներքը, մոտիկ ըրէք փաքիկ պատմութիւն մը, զոր հօրմէս լսած եմ։ Շուկայի մը խանութներէն ապրանք կը պոկի շարունակ։ զայլ չեն կրնար գտնել, որովհետեւ խանութներուն ներքը պահապաններ չկան, որ անոնց վերագրեն գողութիւնը։ դուրսի պահապանը հաւատարիմ մէկը ճանչցուած է։ իր ժամուն պատարագին ուշադիր մարդ մը, նոյն իսկ արտաքին ձեւին մէջ ալ պատկառելի, որմէ երբեք չեն կատարած իր խանութներու փեղկերուն եւ կղպանքներուն վրայ երբեք բռնի նշաններ չկան։ Խանութպանները շուարած են։ Բայց անոնցմէ մէկը հնարք մը կը մտածէ գողը գտնելու համար։ Կ'որոշէ քանի մը գիշերներ մնալ խանութին մէջ, որպէս զի տեսնէ թէ այս զարմանալի գողութիւնը ինչպէս կը պատահի իր խանութին մէջ։ Կէս գիշեր մը, երբ ամէն կողմ լռին է, շուկային պահապանը լախար դոփիով պահապանութեան ելած միջոցին կը կենայ այն խանութին սուղիւ, ուր խանութին տէրը պահուած է։ Պահապանը բոլորովին ապահովութեամբ «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սբարբոյ» կ'ըսէ բաժրածախ, եւ կատարեալ վարժութեամբ բանալով կը բանայ խանութը՝ կ'իջեցնէ եւ կը բանայ կողովը։ եւ երբ կ'սկսի իր ընտրութիւնները ընել խանութին տէրը յանկարծ կը նետուի գողին վրայ եւ կը բռնէ զայն եւ կը յանձնէ Արդարութեան։

Շատ սովորական պատմութիւն մը,

այնպէս չէ: Բայց ի՞նչ կ'ըսէք գողի մը, որ Ամենաաւուրը Երրորդութեան անունով կը սկսի իր գործին: Սխալ Աղօթքին ամէնէն կոշտ մէկ ձեւին տալիս կը գտնուինք այս պատմութեան մէջ: Աղօթքները այնքան նիւթականացած են, որ քրիստոնեայ գող մը բոլորովին բնական կերպով Աստուծոյ անունով կը ձեռնարկէ իր գործին, իբր թէ բարի գործի ձեռնարկած ըլլար:

Նիւթականացուած աղօթքները, այսպիսի գողութեան մը պարագայէն դուրս, իրենց սկզբունքին մէջ միեւնոյն բաներն են, եւ սակայն ասոնք աղօթք չեն: Աղօթքը, նորէն չեղած, հոգեկան է, հոգեւոր կեանքին սնունդն է, պէտք է որ հոգիով եւ ճշմարտութեամբ արտայայտուի, որովհետեւ Աստուած ալ հոգի է եւ կարելի չէ ուրիշ կերպով եւ պայմանով երկրպագել եւ աղօթել անոր տալիս: (Յովհ. Դ. 24):

Աղօթքը հոգեկան պէտք է ըլլայ նաեւ տա՛ պատճառին համար: Մենք ոչ միայն իրաւունք չունինք այնպիսի նիւթական բաներ խնդրել Աստուծոյ, զորս չենք կրցած ձեռք բերել մեր ոյժերով եւ պայմաններով, այլ նաեւ Աստուծոյ՝ մաւնաւորապէս ասոր անոր խնդրելի օրէնքները չփոխել:

Մարդը, կենդանական թագաւորութեան ամէնէն վերին սանդղամաստին վրայ դրուած, օժտուած է ամէնէն բարձր կատարելութիւններով, տիրած է բնութեան գաղանթներուն վրայ, գիտէ նա բոյսերուն յատկութիւնները, երկրին խտւերը, հոնքերուն խորքը եւ ծովուն ալքը: հեռատես է ան, վտանգներ կը նախատեսէ, շահեր կ'ապահովէ, իր գիւտերով հրաշալի բաներ կ'ընէ, եւլն. եւլն.: Այսպիսի մեծ եւ ամենայարժար կարողութիւններով օժտուած մարդը՝ ի՞նչու ուրեմն դուրս ելլէ իր կարողութեան եւ կանոնաւորութեան սահմաններէն, եւ վտանգէ ինքզինքը եւ ասոնց համար Աստուծոյ դիմէ: Չէ՞ որ, դուն, ո՛վ մարդ, դուն գիտէիր թէ քու ուժերէդ վեր բեռ մը պիտի վնասէր քեզի. դուն չափաւորութեան սովորած մէկը, կեր ու խու-

մի զեղծումներով պիտի հիւանդանայիր, դուն փորքիկ լիճի մը մէջ լողալու վարժուած՝ բաց ծովի վրայ պիտի ընկղմէիր: Ի՞նչպէս ուրեմն Աստուծոյ քեզի պարգեւած ոյժերն ու կարողութիւնները չարաչար գործածելի կամ չգիտցար գործածել, եւ հիմայ կ'աղօթես որ քու վնասներդ ինքը վարմանէ: Կ'ուզէ՞իր որ բնութեան սքանչելի եւ տիեզերական ներդաշնակութիւնը Աստուծոյ տալիս ընէր մեր այլազան խնդիրքներուն համար, վասն զի մենք միեւնոյն ոգիով չենք աղօթեր, նիւթի համար կ'աղօթենք, նիւթապէս կ'աղօթենք, տարբեր տարբեր բաներ կ'ուզենք Աստուծոյ, մեր քանոնաւորներուն համեմատ: Ո՛չ. ասոնք աղօթք չեն. ասոնք ամուլ ձիւքեր են, ինքնախաբուծիւններ, մեր տգիտութեան արտայայտութիւններն են, վերջապէս անպայել բաներ են ոչ միայն մեր բարոյական եւ հոգիկան բարձրութեան, այլ նաեւ Աստուծոյ մեծութեան եւ փառքին: Հաւատացեալ մարդու՝ Աստուծոյ հետ ունեցած կապն ու յարաբերութիւնները նիւթական չեն. զուտ հոգեկան են, բարոյական են, եւ երբ դուն չես գիտեր զայս եւ կամ կ'անգիտանաս եւ ըստ այնմ կ'աղօթես, անարգանք մըն է ըրածդ, որովհետեւ չես գիտեր թէ ի՞նչու եւ ի՞նչ բանի համար կ'աղօթես: Մենք իսկ, մենք մահկանացուներս չենք սրտնեղիր, մենք զմեզ վիրաւորուած չինք զգար՝ երբ ուրիշներ մեր գիրքին ու պատուին, մեր յաւակնութեան կամ արժանապատուութեան համեմատ բաներ չուզեն մենք: Տարակոյս չկայ: Ի՞նչպէս ուրեմն գտնէ նոյն կերպով չմտածել Աստուծոյ վրայ՝ երբ կ'աղօթենք նիւթական բաներու համար:

Աստուծոյ պէտք է խնդրել միայն այն բաները, որ անոր են, եւ չեն գտնուիր հոս, այս մարդեայ աշխարհի մէջ: Իր թագաւորութիւնն ու արդարութիւնը պէտք է հաւատացեալին: Աղօթէ ասոր համար, ո՛վ Քրիստոնեայ, վասն զի զայն ուրիշ տեղ չես կրնար գտնել: Երջանիկ կեանք մը այդ հոգեւոր եւ բարոյական սկզբունքներուն վրայ կրնայ հիմնուիլ. աղօթէ՛ ասոր համար:

Մարդու պէս ապրելու համար ուսանող պէտք է, հագուստ պէտք է: Ասանք դուռն ձեռք պիտի բերես՝ քու արդար վատտակովդ, ինչ որ կ'ուտես ու կը խմես, ուղղակի պէտք է համապատասխանէ քու շահիդ, քու արժանիքիդ, այսինքն արդարութեան բուն պայմաններուն: Երբին, աղօթէ որ Տէրը քեզի տայ քու օրական շահերդ ու աշխատութիւններդ արդարապէս վարելու հոգեկան ջնտրհն ու կտրտել:

Ընկերական կեանքդ երջանիկ ընելու համար պէտք է որ խաղաղասէր ըլլաս, ներող ըլլաս: Երբ չունիս այս յատկութիւնները, երբ չես ներեր ընկերիդ՝ պիտի չներէ քեզ Երկնաւոր Հայրդ: Աղօթէ ուրեմն՝ երբ ներած ես ընկերիդ, եւ դիմէ Աստուծոյ:

Մարդիկ ընդհանրապէս զիրար փորձանքի կ'ենթարկեն, եւ չա՛ն են փորձութեանց տեսակները աշխարհի մէջ: Որպէս զի անորի՞ մնաս այդ փորձանքներուն մէջ՝ երբ ենթարկուիս անոնց, որպէս զի եթէ կարելի է ամենեւին չենթարկուիս չոր փորձանքներու, աղօթէ՛, հոգեկան յարաբերութիւններդ զօրացուր, եւ դուն իրապէս անփորձ պիտի մնաս, պիտի գտնես փնտռածդ Աղօթքի մէջ:

Դուրս մի՛ ելլէք Հայր մերի սահմանէն, այդ սկզբունքներուն վրայ չհիմնուած աղօթքը հեթանոսական է, քրիստոնէական չէ:

Կեանքը դիտեցէք, ուրեմն, Բրիտանիա աշքերով, որպէս զի գերի չըլլաք նիւթին: մի՛ մոռնա՛ք որ կերակուրը կեանքէն եւ հագուստը մարմնէն աւելի չարժեք: Աստուծոյ թաղուորութեամբ հարստացած կեանք մը, Անոր արդարութեամբ կազմուած եւ ուժաւորած կեանք մը՝ միշտ լաթոյական է, միշտ հոգեւոր է, եւ այսպիսի կեանք մըն ալ միշտ Աղօթքի կեանքն է:

Օհ, եկէք միշտ այս աղօթքը ըրէք՝ երբ առանձին էք, երբ Եկեղեցւոյ մէջ հաւաքուած էք, եւ այս աղօթքով փառաւորուեցէք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, Ամէն:

ԲԱԲԳԷՆ ԵՄԻՍԿՈՊՈՍ

ՊԱՐՏՔՆ ՈՒ ՊԵՏՔՆ

Երկու նախորդ Սրբազան Պատրիարքներուն պարտքը՝ որուն մէջ թերացան բարձրակազմ, երբ երկու ծառայութիւններու միասին ընելու, ու քիչ մըն ալ աւելի՛, կ'երեւի թէ փայլելու տեսչովը անկման շրջան մը պատրաստեցին իրենց իսկ ձեռքով: Պարտք ունէին վճարելու երբ մտքի կարողութիւններու շարք մը ունէին ամբարուն, ինչ որ չատ ուրիշներ չունէին, ու կիսատ թողուցած՝ ստաբեր շրջաններու քաղցին, ու այս շրջանը երկուքն ալ կտոնցուց, երկուքն ալ կիսատ թողուց: Ու հիմակ դարձեալ պէտք ունինք երկուքին ալ, ու չատ օգտակարութիւններու աչք տնկած ենք, եթէ դառնան իրենց նախնական պարտքին, որ պիտի լրացնէ պէտքը, պիտի գոհացում տայ բարձրակազմին:

Ա.— Օրմանեան Ս. ի մասին այնչափ զրեցին եւ սրչափ խօսեցան: Ասանց վրայ չէ որ պիտի անդադուանամ. նպատակս ո՛չ արգարտցնել է եւ ո՛չ ալ դատապարտել: Մեզից եւ բոլոր դատապարտողներն աւելի Օրմանեան Ս. ինքը գիտէ թէ ինչ էին իր թերութիւնները ու մանաւանդ խոշոր թերութիւնը որ կարծես մեծ մարդերու յատուկ է: Այս մեծ թերին համար ամէն կողմով կը քննադատուի ու չարաբանար՝ եթէ երբեք մեղմացուցիչ պարագաներ տեսնուին եւ կամ ստեղծեն: Նա՛ զգացումէ թերի էր, այն զգացումէն որ իրեններուն հանդէպ կը բարոյներ... այն զգացումէն որ մարդը կը բարձրացնէ ամէն նիւթականութիւնէ վեր: Բայց այս վճռով պիտի կրնանք անտեսել Օրմանեան Ս. ի կարդ մը կարողութիւնները:—Ո՛չ անշուշտ թէ այդ կարողութիւնները զինքը պատրարքացնելու կամ կաթողիկոսացնելու են, այլ անոնցմէ օգտուած ենք ու կ'օգտուինք, եթէ՛ միտները ճշդուին: Օգուտները եւ կարողութիւնները բոլորովին մոռնալ ճշմարիտ հայեացքներու, բանասիրութեան ուղղադատ դատողութիւններու դէմ մեղանշել է: Այո՛, Օրմանեան Ս. պարտք ու-

նէր իբրեւ մարդ ծառայելու, իբրեւ կղեր
սպասաւորելու ու իբրեւ հմուտ միաք
գործելու, ու այս ամէնը իր տեղին, վի-
ճակին ու ժամանակին մէջ: Եթէ չծառա-
յեց այնպէս որպէս վայել էր, եթէ չզօր-
ծեց որուն աշակերտած էր և որը ամբա-
րած էր, բացարձակապէս մեղանշեց. ու
դա՛ իսկ բաւ է, որ պիտի ծանրացած մնայ
խղճին և ուխտին վրայ: Դատաւարապա-
նիրս զգոյշ լինելու ևնք որ միակողմանի
չլինինք, ու ամէնը մէկ ջրով լուսուլու քա-
ղաքակամութիւնը չյնդգրկենք. զի լուրջ
խորհողներու չպիտի վայելցնեն: Նուա-
կրեանք լռելի բառ Աւետարանի. — Անմեղն
'ի ձէնջ նա արկցէ . . . :

Օրմանեան Ս. ծառայելու, սպասաւո-
րելու, գործելու բուն վիճակին, պաշտո-
նին ու դերին մէջն էր երբ Դպրեվանքը կը
կառավարէր: Սա՛ իր մեծութեան, բարձր-
ութեան ու պարտաւորութեանը մէջ էր,
ու այդ վերելքը իրեն համար շատ յաջող
էր, ու ամենամեծ պէտքի մը առջեւ իբրեւ
պարտավճար առաջլինէր: Անոր Պատ-
րիարքական դահլ բարձրացումը սխալ մըն
էր որ իր անկումը պատրաստեց: Դպրե-
վանքի պաշտօնավարութեան ստանձնու-
մովը օգտակարութիւններու շարք մը մէջ-
տեղ բերած էր, և եթէ շարունակէր՝ մի-
թէ նուա՞ղ փայլուն էր, ու նուա՞ղ օգտա-
կար քան զՊատրիարքութիւն. ու ո՛րչափ
պատուաբեր նոյնչափ բեղմնաւոր պիտի
լինէր, և այս շարունակումը Վերնետկի
հոնգոյն փառաւոր հաստատութիւն մը
չպիտի՞ ծնէր Չարխափանի հովանւոյն տակ:
Չենք կրնար շատ բարձր համարիլ Ալիշանի
մը վարդապետութիւնը իր բազմաբեղուն
պատկերովն ու անուանովը, քան ո՛ր և իցէ
մի Պատրիարքի անունը, որ գաւազանա-
գրքի մէջ միայն տեղ մը և թիւ մը կրնայ
գրուած լինիլ: Բացառութիւնը հազուա-
գիւտ:

Մեր մենաստանները թուով այնչափ
շատ, որչափ դիրքով սքանչելի, քանիննր
շարաթացեալ, բայց շատեր ալ արդիւնա-
բերութիւնով համբաւեալ, սակայն Վերնե-
տիկ մը ու Վերնեա մը կրնա՞ք ցոյց տալ.
ո՛չ, ո՛չ, ո՛չ, ինչո՞ւ գէթ մի հոտ չենք

կրնա՞ք տեղծել: Շէ՛նքը կը պակսի թէ
նիւթը, պէտքերը թէ մարդիկը, միջոցնե-
րը կը պակսին թէ պարագաները չեն նե-
րեր: Եւ ո՛չ մին, այլ ձեռներէց ոգին,
անշահախնդիր ոգին, չարքաշ կեանքն ու
վարելու ոգին, և գործ մը ստեղծելու
հմտութիւնը: Կը կարօտինք Մխիթար Աբ-
բայի մը որ կարենայ հիմքը դնել, սրղեօք
նուա՞ղ կը կարօտինք մատենագրութեան
(Հայ) պատմութեան, բարոյախօսութեան,
ազգագրական, բանասիրական գրուածք-
ներու, աստուածաբանութեան, իմաստա-
սիրութեան, որոնք ցեղի մը լաւ ու յոյժ
կողմերը մասնանշելէ տեղի, զայն սզ-
նուացնելու, որբացնելու պիտի ծառայեն,
և ազգերու մէջ իբրեւ որոշ ցեղ ու հա-
մայնք ցոյց պիտի տան իրենց պիտանու-
թիւնովը, անցեալովն ու ներկայովը: Շատ
բանաւոր չպիտի՞ լինի, երբ շատ անգամ-
ներ խօսուած այս բացորոշ պէտքին տուե-
լանտանք, չհնանք: Ամէնը ունինք,
միայն փոքրիկ ջանք մը և բարի կամեցո-
ղութիւն մը, ու կրնանք օգտուիլ Օրմանե-
ան Ս. ին կարողութենէն: Ինք թող տու-
նէն դուրս գայ, մենք ալ մեր հետապնդ-
ղութներէն ետ կենանք, ու չսղահնք
զինքը շլատուած վիճակի մէջ, որ դար-
ձեալ այնչափ աշխատութիւններ ունեցաւ
գրական բաժնին մէջ, ու եթէ 12 երկար
տարիներ առ ոյգ ծառայէր, ինչե՛ր չպիտի
կրնար արտագրել: Օրմանեան Ս. ը փոխա-
նակ ալ եւս սա՛ ու նա՛ աթոռին թեկնա-
ծու նշանակելու ու թեր ու դէմ յարձա-
կումներու առակ նշաւակի լնելու, դա-
տապարտելու ու արգարացնելու, շատ
ուղիղ ու խելացի գործ մը բրած պիտի
լինինք՝ զինքը հրաւիրելով որ հաճի էջ-
միածին գնալու, իբրեւ պարզ վստական, և
հոն իր շուրջը հաւաքէ համալսարանական-
ները, և հիմքը դնէ նոր իմն Վերնետկի:
Միջոցները նոյնութիւնով կը բաւեն, պատ-
րաստ գեալին մը կայ գրական ու գիտնա-
կան, պատրաստ ու ճոխ թանգարաններ,
մամուլ ևն . . . : Շատերը իր աշակերտներն
են, և կը հաւատանք թէ անոնք եւս ամե-
նամեծ սիրով պիտի ընդունին, և բարձա-
ցուածէն տեղի յուսովից յաջողութիւններ

պիտի ոչլուենք. և ահա Օրմանեանի պարտքը, որուն ուխտեալ մին է, և ահա մեր պէտքը որուն կը կարօտինք, և զայն լցուած ու լրացած տեսնել կը փափաքինք այսպիսով:


Բ. Դուրեան Սրբազան. — Սո՛ւ ես նուազ չգտաւ փետուեցաւ, իր շուրջը յուզումներ, ազմուկներ թեր ու դէմ գրուածքներ, խօսքեր... որոնք կրնային աւելի կշռուած ու չափաւոր լինիլ, կամ կրնանք նաեւ ըսել թէ Դուրեան Ս. կրնար իր իսկ որոշ եւ կարուկ վճռովը տեղի չառն մէկ երկու ամիսներու ափս քաջքշուք եւ ցաւալի կացութեան, որ անշուշտ ազգին ու իր համբաւին պատուաբեր չէր, եւ կարգ մը գործերու ալ վնասակար. բայց այս ամենովը դարձեալ կրնանք Դուրեան Ս. դատաւիտեալ կամ կարողութիւնը կրնանք ոչինչ համարիլ. ո՛չ: Եթէ սխալ մը գործուեցաւ, նոյն ինքն ժողովրդին կողմանէ էր: Դուրեան Ս. բուն իր ասպարէզին ու կոչումին մէջ թողնելու էր. նա՛ հոն աւելի բարձր ու մեծ էր եւ վեր ամէն նիւթականէ, նա Դպրեվանքի նուիրակատար պարտականութեան մէջ շատ սիրելի ու յանգալի յարգելի էր, քան խոշոր թևի մը Առաջնորդութեանը մէջ: Դուրեան Ս. Արմաշի մէջ շատ գործ ու աշակերտ հաւաքեց, քան Իզմիրի մէջ աչքս ուս գործեր մը: Մտտի վրայ համարուելիք գրական ճիւղին ու շարքերուն մէջ չե՞նք կրնար ըսել կզական դէմք մը, որոշ հմուտ թիփ մը: Ի՞նչու այս սխալը ամէն անգամուսն համար կը գործուի. բոյս մը որ իր բունին ու տեղին վրայ շատ լաւ կ'աճի, կը ծլի, կը ճիւղտի ու պտուղ տալու կը հասնի, ահա զայն կը խլենք եւ կը տանինք տարբեր տեղի մը եւ հողի մը վրայ կը տնկենք, ուր շատ անգամ չի յաջողիր ու արմատին վրայ կը խամբի: Դուրեան, Դուրեան մին էր երբ Վանքի միջնորդարին մէջ գրչով կը բուրլաւէր, մեղանով կը խնկէր, դասերով կ'աղօթէր, աշակերտներով կ'եղանակէր գիտական ծածարին մէջ. ու եթէ այդ շարունակութիւնը տեսէր, ցարդ Արմաշը Վիեննա (միտրանութիւն) մը չպիտի տեսնէինք:

Ո՛չ ժամանակին յարգը գիտենք, եւ ալ տախթէն օգտուելու պատենութիւնը: Կը ստեղծենք բայց չենք պարեցներ. կեանք կը ծնինք՝ հոգի չենք դնիր մէջը, առաջին առիթով անկարելիին կը ձգտինք, վերջին պահուն կարելին իսկ կ'անտեսենք. սկիզբէն մարդը կ'աստուածացնենք, վախճանին կը ցնիտունք. պաշտօնով մը երախտագիտութիւննիս կը յայտնենք տաանց քիչ մը լաւջ խորհող լինելու, յետոյ էլ պաշտօնը պաշտօնեային գերեզմանը կ'ընենք: Խնդիրներու, գործերու շուրջը օգտակարութեան անտեղեկէտէն չենք նայիր, այլ մութ հայեացքներու, կանխակալ կարծիքներու, ենթադրական հաշիւներու, անկուրութիւններու, անձնական ետերու ու սին հաշիւ ներու շուրջն է որ կը շրջինք, կը մըլտինք ու մինչեւ խորը... Գրական, գիտական, բանասիրական, տղագրական, պատմական, բարոյական ճիւղերնիս շատ թերի է ու շատ տկար՝ նոյն այդ պէնքերը շատ գուլցած. տանցնով չենք կրնար զինուել արդիականութեան, նոր սերնդական գաղափարներու ու քարոզողութիւններու դէմ. ժամանակի ողիին ու պէտքին համաչափ ու համահաւասար կամ համապար չեն ընթանար մեր մտքի կարողութիւնները. միջոցները ու գործիները պէտք է կատարելագործել. միջոցը յանձնառութիւն է, գործիքը նախաձեռնութիւն ու ձեռնարկեցութիւն ու այդ ողին, հանգրձ յարատեւութիւնով եւ իսպառ համբերութիւնով. յանձնառութիւնը ձեռնարկեցութիւնը կը յառկանչէ, ձեռնարկեցութիւնը յարատեւած կը քալէ. ու ամէնը միասին համբերութեան կը կարօտին, գործի մը յաջողութեան գրաւականը: Դուրեան Ս. շատ եւ շատ տրամադրելի ուժ մը ունի, անվիճելի են բարեմասնութիւնները, նոյնքան հմտութիւնը, անկեց օգտուել պէտք է առանց այլեւայլի. պէտք է խնդրենք իրմէն և ինք հաճի Երուսաղէմ գնալու, պէտք է վերջնական աշխատավայրը հոն ընտրէ, սա ու նա՛ ամբողջութեամբ թեկնածու չլինելու պայմանաւ: Աթոռները չեն որ կը բարձրացնեն տիտուականը՝ այլ ամբողջական ու շատ անգամ աննշան համարուած ա-

թուաները այնչափ կը բարձրանան որ պաշտանքի կը հասնին։ Ուրեմն միայն առ այդ աշխատելու է։ Քանի՜ անուններ կան որոնք անմահացած են առանց որոշ ակտի մը, ու անոնք չպիտի մեռնին երբեք։ Գիրն ու թուղթը, գիրքն ու էջերը թող Դուրեանի ակտները ըլլան, եւ հմուտի գրիչն ու բրիչը թող այդ թերթերն ու թղթերը մագաղաթացեն, որ դարեր չապկած խօսին ու խօսեցնեն։ Երուսաղէմը կրկնակի մեծութիւններով ու վեհութիւններով, պէտքերու գոհացումովը ամէնէն լաւ վայրն է, հնրուստ տեղն է, ու Դուրեանի մը հոն ներկայութիւնը մեծ բարերարութիւնը պիտի լինի, ու ա՛յն պիտի կրնայ մեծ ազդեցութիւն ունենալ սա՛ տիրօղ խառնակ անհամ ու անլի կացութեան, ու պիտի կրնայ սանձել, չափէ՞րնել եսերու, կրքերու, կազ ու կռիւներու։ Այո՛, պիտի կրնայ իր շուրջը հաւաքել շատերը ու յուշիկ յուշիկ յառաջացնել, օգտել ու օգտուել շատ մը հնութիւններէ, որոնք գրադարաններու խորը կը քննան անխռով։ Դպրոց, մասուլ, թերթ, գրեհական նոր նիւթեր մեզի ալ պիտի բերեն լաժին, որդիւնաւորելով կարօտ այդ մեծ Վանքը, Սիօնը։ Անգամ մըն ալ Սիօնը սիօնափայլ պիտի փառաւորուի։

Ահա՛ Դուրեան Սի. կոչման, ուխտին ու պաշտօնին պարսքը. երթալ հաւաքել ի մի, խմբել այդ ուժերը կեդրոնաձիգ, վարժեցնել, հրահրել, նոր ոգի ու կեանք տալ որ դարերով փայլին. ու ահա մեր բացարձակ պէտքը՝ օգտուել Սիօնէն ու Դուրեանէն, հոն տեսնելով Վիեննայի միաբանութեան մը հանգոյն մեղուջան աշխատաւորներ եւ հատորներով մատենաներ որոնց կը կարօտինք։

ՄԱՆԳԱՆՈՒՆԻ



ԱՂ ՈՒ ՀԱՑ

Մեծ կամ քառասորդական Պահլի սա միւս անունը յաճախ մտադրադեցուցած է զիս, եւ իր պարզ երեւոյթին ստակ չեմ գիտնիր ի՞նչ մը կայ ծածկուած, որ փոխանակ կեանքի լիութիւններուն եւ առատութիւններուն վրայ անդրադառնալու, միշտ կը մղուիմ մարդկային թշուառութիւնը մտաբերելու։

Շատ անգամ լսած եւ կարգացած եմ թէ արեւելեան քանի մը ցեղերու ամենափառաւոր հիւրամեծարութեան մէջ ափսէի վրայ տեղ ունի աղն ու հացը։ Եւ ամէն անգամ որ արքայական եւ իշխանական այցելութիւն մը ընդունի՝ օրինակի համար՝ Պարսկաստանի եւ Կովկասի ու եւ մէկ քաղաքը, անկարելի է որ մոռցուի հաւանդ սովորութիւնը. — բարձրատիճան այցելուն իրեն մատուցուած աղն ու հացը գոհունակութիւնով եւ շնորհակալութիւնով կ'ընդունի։ Ասիկա թերեւս նշան մըն է թէ երկիրը բարգաւաճ եւ պսղաբեր է, նորեկ հիւրին սալեով, ինչպէս յաճախ կ'ըլլան Արեւելքի երկիրներէն շատերը, եթէ նոյն իսկ աղահանքեր չունենան աւնոնք եւ ոչ իսկ աղի ծովակներ, եթէ նոյն իսկ քարքարուտ եւ ապառաժ ըլլան անոնք, եւ ստիպուած՝ իրենց հացաբոյսն ալ օտար վայրերէ ներածելու։ Ո՛ր Արեւելքի խեղճութիւնը։ Ահա թէ ինչո՞ւ աղ ու հացը թշուառութեան նշան մը համարած եմ, նշան մը՝ որ կը յայտնէ թէ իր եղած տեղը անսուղութենէ մեռնելու վախը չկայ, ասիկա ալ բան մըն է վերջապէս, չէ՞, ժուժկալ եւ սակաւակիտց Արեւելքցիին համար։ Մինչդեռ ապրիլ գիտցող եւ դիւրակիտց Եւրոպացին՝ որ իր հիւրերը ծողկեփունջերով կը մեծարէ, թերեւ իր այդ փոքրիկ սովորութիւնով իսկ կենսունակութեան աւելի որոշ նշան մը կուտայ, քան սա Արեւելքցին, որ ցուրտ աղն ու մեռած, մանրուած, աղացուած, չաղախուած եւ եփուած հացաբոյսը կը ներկայացնէ իր հիւրին։

Ի՞նչ որ է. իմ նպատակս Արեւելքի եւ

Արեւմուտքի բաղադրութիւնը բնել չէ հոս. այլ պիտի փափազէի գիտնալ թէ սա «Աղ ու հաց» բացատրութիւնը ո՞ւր յոկէն մտած է մեր մէջ: Հարցնելս անգամ սուշ լորդ է, այնպէս չէ: Կարծես թէ չգիտնայի որ խեղճ աղբ մըն ալ մենք ենք. եւ քանի որ իմ վերացական խոկումներու համար բնական անհրաժեշտութիւն դարձած սա տարրերը խեղճութեան որոշիչ նշաններ են, ինչպիսիք ինքնին կը լուծուի. բոլր է թէ խեղճութիւնը մինչեւ մեր բարքերուն եւ սովորութիւններուն մէջ մտած է. եւ ինչո՞ւ քաջութիւն բռնու, ան մեր հոգեւոր կեանքին մէջ ալ հանգչած է եւ հանապազ կը մատուցուի երկնաւոր Հիւրի մը, ինչպէս աղն ու հացը ափսէի վրայ գետեղուած կը ներկայացուին մեծ անձնաւորութիւններու:

Եթէ մեր հին եւ նոր աղագգրութիւնը մշակուած եւ զարգացած ըլլար, ես իհարեւ կարողանայի հաստատել թէ Մեծ Պահքին չորաբեկ հացով եւ լոկաղով անանդներ եղած են, եւ կան տակաւին շատ տեղեր, իբրեւ եկեղեցական կանոնադրութիւն: Բայց ասիկա այլեւս աչքի չպիտի դարնէ, քանի՜ ներկայի կեանքը հետզհետէ սղէ եւ դառնանայ: Մեծ Պահքը երկրագործ ժողովուրդին համար ոչխատութեան չըջնա մըն է. եւ դժուար է միթէ դաշտերուն մէջ այս օրերուն հանգստիլ մշակութեան, որոնք արեւմադէ մինչեւ մայրամուտ հերկելու եւ ցանելու ծանր յոգնութիւններուն մէջ կը գոհանան ցամաք հացով կամ ամենաչնչին մնունդով: Ասիկա բոլորովին տկամայ պահեցողութիւն մըն է, երբեք չի նմանիր սա մեր քաղքեցի կամաւոր պահեցողութեան՝ որուն տառաւորութիւններն ալ ուրացողներէն չեմ:

Բայց չեմ գիտեր թէ օգուտ մը ունի՞ արդեօք այնքան անգամներ հրապարակուելէ վերջ անգամ մըն ալ կրկնել հոս թէ կ'արժէ որ աղուհացից սա օրերուն յիշենք մեր հեռաւոր խեղճ աղգակիցները: Ասանք իրենց գութանով ու արօրով կը պատրաստեն թերեւս իրենց նիւթական աղի ու լեղի հացը. բայց ո՞վ պիտի մատակարարէ անոնց հոգեւոր եւ մտաւոր

մնունդը. ո՞վ անոնց հոգիները ներխուժէ եւ փնայումէ պիտի փրկէ, դնելով անոնց վերայ հաւատարմի աղբ: Ո՞վ պիտի հաստատէ անոնց մտքերը Աւետարանի ճշմարիտ հացով: Եթէ կայ այս ամէնը կատարող մը, ես պիտի փոխեմ իմ գաղափարս, եւ այսուհետեւ չպիտի բռնմ թէ աղը եւ հացը խեղճութեան նշան են. հապա պիտի խոստովանիմ թէ աղը դեղն է լեղիին. եւ հացը համն է Յիսուսին:

Սակայն կարծում այս խոստովանութիւնը բնելու ասիվը չպիտի ունենամ, որքան տոկն որ չառանկա կոչումին բարձրութեան վրայ բոլոր Հայ ցաղապրութիւնը անոնց՝ որոնց լուսն Յիսուս «Գութ էք աղ երկրի»: Ե՞րբ պիտի գայ այն օրը՝ որ տոկն հայ եկեղեցականութիւնը՝ իբրեւ աղ իր պէտքը զգալի բնել տայ նոյն լոկ ամենափոքր խմորային զանգուածներու մէջ, որոնք մէկ բառով ընկերային համախմբութիւն կը կոչուին:

Կուգայ թերեւս այդ օրն ալ. սպասենք եւ յուսանք. բայց ներկային համար խօսելով եւ Յիսուսի առաքելայինութեան ուղղած նախադասութիւնը լրացնելով՝ անգլլ չէ՞ հարցնել, ապա եթէ «աղն անհամեսցի իւր յողեսցի»:

ԳԱՋՐԻՆ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՇՈՒՐՋԸ

Նախարկ չաթեւն Պատրիարքարանի մէջ նիստի հրաւիրուած Համագումարը շատ տակի խօսեցնել տուաւ քան որչափ կ'արժէր իր օրակարգը: Խնդիրը, ինչպէս ի վերջոյ իմացուեցաւ, կը դառնար սա հարցին շուրջ թէ պատկազրութիւններու հանրային վայրերու մէջ կատարուիլ պէտք է թոյլատրել թէ արգելել: Գիտենք թէ Համագումարին անդամակցող եկեղեցական Հայրերը միջին ճամբայ մը բռնեցին, հանրային վայրերու մէջ պատկազրութիւններ արգելելով, բայց թոյլատրելով անոր կատարումը ընտանեկան յարկերու տակ: Գլուխուցան օրագրեր, որ դատարիտեցին ժողովը՝ անոր տուած որոշումը նկատելով

անդրինք՝ «նեղմիտ ողբի մը»։ Ասոնք կը պնդէին թէ «անցած է սեղմումներու դարը, եւ երբ կ'ուզենք մեր ժամանակին հետ ընթանալ, պէտք է վրանուս թօթափենք աւելորդ նախապաշարումները»։ Տեսէք, սակայն, ի՞նչ կը գրէ մօտաւոր գաւառի ընթերցող մը, որ ամէնէն լայնամիտ գաղափարներու տէր, սակայն միեւնոյն ատեն ջերմ նախանձորնդիր մ'է եկեղց. կարգաց եւ կանոնաց պահպանման. —

«Նախ՝ պատկի Եկեղեցւոյ մէջ կատարուելը Հայոց Եկեղեցւոյ օրէնքն է։ Մաշատցի կարգն ալ այդ հիման վրայ շինուած է։ Սկզբնական բարքերու հետեւանքով է, որ Հայերը, բարբարոսներու եւ հեթանոսներու մէջ, ստիպուած են պատկը առնը կատարել, փողոցը չկլլել. վասն զի նշաւակ կ'ըլլար հարսանեկան թափօրը Տեքապէյններու էջեններու, արկաններու լեզուազարութեանց, անորդանաց, նոյն իսկ բռնարարմանց։ Քանի որ հիմա ստակ բան չկայ, վայելուչ է Եկեղեցւոյ մէջ կատարել պատկը։ Զարմանալի՝ բռն. ննջեցեալներու կարգը Եկեղեցւոյ մէջ կատարել կուտան, ծախք եւլն. չեն բոկր, եւ կենդանիներու պատկը կը փախցնեն եւ կեղեցիէն։

«Երկրորդ, Պալոյ մէջ պատկները առնը կատարելու փափաքը ծախքի համար է եւ ոչ ուրիշ բանի համար։ Բայց ո՞վ լուսւ որ տրտաքոյ կարգի ծախքեր ընելու է։ Չափաւորութեամբ ամէն բան վայելչօրէն կըրնայ տեղի ունենալ։ Իսկ Արեւելի բաժնը թէ «Այս տեսակէտով դպրոցի մը կամ հանրային հաստատութեան մը սրահին մէջ կատարուած պատկազրութիւն մը, ըստ իս չմտ ծրինուոր եւ պատշաճ հարկ է նկատել», ուղիղ չէ։ Եկեղեցական Հայերը ծախքի խնդիրը նկատի առած են, առնեբու մէջ թոյլ տալով պատկը։ Քանի որ առնէն դուրս տեղ մը, դպրոցի մը սրահին կամ հանրային հաստատութեան մը սրահին մէջ պիտի ըլլայ պատկը, այսինքն առնէն դուրս կառքի ծախքեր պիտի ըլլան, դպրոցին կամ սրահին նուէր մը պիտի տրբուի, ինչո՞ւ Եկեղեցի չերթան, այսչափ ծախքը ընելէ ետքը։

«Օրմանեան Ս. նոր օրէնք մը չէ հաս-

տատած պատկները առն վերադարձներով, այլ առաջըր առած է կարգ մը զեղծումներու, եւ Հայոց նին սովորութեան առած է յարգը։ Իբր թէ ասիկա ծանր մեղադրանքի արժանի բան ժը եղած ըլլար, Արեւելի կը գրէ որ «Օրմանեան Պատրիարքի ներշնչութիւն ու անոր ազդեցութեան տակ նախորդ Ռէփորմին ատեն, Կրօն. Ժողովը այսպիսի որոշում մը տուած է»։ Բայց այսպէս մտածել սխալ մը պիտի ըլլար, ինչպէս տեսնենք»։

Ուրիշ նամակագիր մը, տարբեր հայեցողէտով մը, Համագումարին ա՛յդ խնդրոյն համար նիստի նշաւորուելն իսկ աւելորդ կը նկատէ, եւ կը պնդէ թէ Թրքահայոց եկեղեցական վերին Ժողովին՝ ինչպէս է Համագումարը՝ բեխդիժը բարձրացնելու հանգամանք չունէր նոյն գումարումը։ Պատկազրութեանց միմիայն եկեղեցւոյ մէջ, թէ առնեբու եւ հանրային վայրերու մէջ եւս կատարուելէն շատ աւելի կարեւոր հարցեր ունի լուծելիք Հայ Եկեղեցակա նութիւնը, կ'ըսէ վերոյիշեալ նամակագիրը։ Մեր մասին համակարծիք կը գտնուինք այս վերջին դիտողութեան, միեւնոյն ատեն համամիտ գտնուելով եկեղեցական Հայոց նոյն գումարման մէջ տուած որոշման, պատկը Եկեղեցւոյ եւ առնեբու մէջ կատարումն հաւասարապէս արտօնելութեան։ Իրաւ է որ նախորդ Կրօն. Ժողովին կողմէ՝ ճիշտ նոյն իմաստով որոշում մը արուած, եւ փոխանորդ Ս. Հօր պաշտօնագրով ծանուցուած էր ամէն կողմ, եւ չէր արժեր նիստ գումարել այդ որոշման վերահաստատումը ձեռք բերելու համար։ Բայց նոյնքան իրաւ է որ Տեղապահ Ս. Հայրը օրինակելի սահմանադրասիրութիւն մը ցայց տուաւ, սիրով ընդունելով մեծամասնութեան որոշումը որ իր կարծիքը չէր ցոյցաներ, քանի որ Ն. Բարձր. Սրբազնութիւնը փափաքով էր պատկները միմիայն Ս. Եկեղեցւոյ մէջ կատարել, ինչպէս կը պնդէ քիչ մը վերը հրատարակուած նամակին հեղինակն ալ։



ԳԵՐ. Տ. ՍՈՒՐԵՆ Ծ. Վ. ԳԱԼԷՄԵԱՆ

ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱՂԷՇԻ

Ի մօտայ մայրաքաղաքէն ճամբայ կ'ելլէ Բաղէշի նորընտիր առաջնորդ Գեր. Տ. Սուրեն Ծ. Վ. Գալէմեան: Ն. Գերապատուութիւնը անձանօթ մը չէ Տաճարի ընթերցողներուն, որոնք յաճախ առիթը ունեցած են կարգալու այս էջերուն մէջ աւոր հիւթելու շինիչ յօդուածները՝ զանազան նիւթերու վրայ, ինքնապէր կամ թարգմանածոյ: 1884ին ծնած Արարկիրի մէջ, պզտիկ հասակի մէջ Պրուստ դպրոց շրջանաւարտ եղած է տեղւոյն ֆրանս. վարժարանէն: Բայց ի վերջոյ, ներքին անդիմադրելի մղումով մը, դիմած է Արմաշու Դպրեվանքը, ուր 1901ին ընդունուելով, 1903ին դպիր, 1905ին սարկաւագ, եւ 1909ին վարդապետ ձեռնադրուած է: Տարիէ մը ի վեր կը վարէր Սկիւտարի Ս. Կարապետ Եկեղեցւոյ քարոզչութիւնը, եւ վերջերս ալ իրեն յանձնուեցաւ է Ազգ. կեդր. վարժարանի կրօնի դասաւանդութիւնը: Բաղէշի ազգայինները, որմանաւոր եւ գիտակից ընթացք մը ունեցան, առաջնորդի ընտրութեան առթիւ իրենց քուէները միացնելով Ն. Գերապատուութեան վրայ, որ մէկն է այն Արմաշականներէն, որոնք երկտասարդական եռամսհուն գործունէութեան մը կը միացնեն կրօնականի վայել լրջութեան եւ շրջահայեցութեան, ինչ որ ընթերցողները կըրցած են դիտել իր գրութիւններուն մէջ ալ: Բաղէշի առաջնորդ ընտրուելուն առ-

թիւ Ն. Գերապատուութիւնը, անցեալ ամսոյ մէջ Կրօն. Ժողովոյ որոշմամբ ծագաբունութեան տաճարն ստացաւ Գեր. Տ. Մաղաքիա Ս. Եպիսկ. Տէրունեանէ:

Կար եւ կարողութիւն եւ կատարեալ յաջողութիւն կը մտլթենք մեր պատուական աշխատակցին, իր ստանձնած դժուարին պաշտօնին մէջ: Իրեն նման եկեղեցականներ մեծապէս օգտակար պիտի ըլլան զաւուրի մէջ, ուր մեր առաւապեալ ժողովուրդը այնքան պէտք ունի որքան եռանդուն եւ անձուէր, նոյնքան ալ լրջամիտ եւ շրջաճայեաց Առաջնորդներու:

ՏԱՃԱՐՆԵՐ

Մ. Ե. ԻԳ

Հին տաճարներ, բազիլիկներ՝
Անմեղ զոհեր են տեսեր,
Քուրմերն անգուր չ'աւսուածոց՝
Շարժեր են սուր, վառած բոց:
Բահադին ալ հին քուրմեր,
Ասուրեաններ են կանգներ,
Ողջակիզման հեցեհեց՝
Բիւրիցս բիւր զոհերուն:
Քուրմեր ներմակ մօռուքին՝
Ձեռքն, ալեքառ մագերին
Կարմիր ներկած անխողով՝
Անմեղ մարդոց արիւնով:
Հին տաճարներ գմբեթով՝
ՍԱՓԱՒՈՂԻՆ անունով,
Շինեց ձեռք մարդկութեան,
Սեղան, բազիլ, զոհարան:
Աղ սեղանին, բազիլին՝
Պատշոնեաներն հին ուխտին,
Քրքան զոհեր իմաստցին
Վասն հաւատարման երկնին:
Ու Ննովան իր կայքէն՝
Ողջակիզաց բուրմունքէն,
Սիրք արբիւր անխողով,
Խնդացեր է հանդիմով:
Նոյն Ննովան հին աւուրց՝
Որ գրոս հայրն էր հանուրց,
Տեսաւ Հայու տաճարին
Բիւր զոհեր քսմնագին:
Հայու տաճարն է կարմիր,
Շինուած օրէն յայտ երկիր,
Ուր ոչ նոխազ ոչխարներ,
Այլ հայ ցեղս է մորթուեր...:

ՍԱՄԱՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.

1911 Փետր. 12

Ա. Կանա

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ, Պատրիարքարանի
և Կառավարութեան միջև յարաբերու-
թեանց տեսակէտով, ստիպուական հանգա-
մանը կ'առնէ: Կարնոյ առաջնորդ Տ. Սմ-
բատ Եպիսկ. կը դրէ թէ ուսուցիչներու
վկայականները վաւերացման յանձնուած
ըլլալով, շատեր զինդեորագրութենէ ա-
զատուած են: Բաց հիմակ ալ արածնա-
դրի խնդիրը կը հանուի, եւ կը պահան-
ջուի որ դպրոցներու արտօնադիրն սնու-
ցուի: Խնդիրքն այն է սակայն թէ պրո-
նագիրն որո՞ւ սնունով պիտի աւանդուի:
Դպրիկի ուսուցիչը զինուոր տարեր են՝
վարժարանն արտօնադիր չունենալուն հա-
մար, որով վարժարանն ալ փակուեր է:
Շ. Գարահիւսարէն ալ կը գրեն Պատրի-
արքարան թէ Մէարիֆի քննիչները պա-
հանջած են որ Հայոց վարժարանները պէտք
է իրենց ուզած տեղեկութիւնները քան:
Առաջն. փոխանորդն ասիկայ միջամու-
թիւն կը կարծէ:

Պատրիարքարանն արդէն ըրջօրէն կը
զբաղի այս խնդրով: Անցեալ ուրբաթ օր
Խառն ժողով գումարուեցաւ, միմիայն այդ
հարցով թաղելու համար: Յատուկ մաս-
նախումբ մը տեղեկագիր մը պատրաստած
է, եւ ճշգրտած են Կառավարութեան պա-
հանջները, (Պետութեան կողմէ ուղղակի
հսկողութիւն Ազգ. վարժարանաց վրայ,
Ազգ. վարժարանաց համար Մէարիֆէն
արտօնութիւն ստանալ, Կրթական պետա-
կան նպաստը ուղղակի ուսուցիչներու կամ
Հոգաբարձութեանց տալ, Միայն ուսու-
ցիչները միայն զինուորագրութենէ ազատ
թողուլ, իսկ այցելուները զինուորա-
գրութեան ենթարկել, Մէարիֆին ներ-
կայացնել կղերական վարժարաններու ու-
շակերանաց, տեղւոյն եւլն): Վերաբերեալ
մանրամասն ցուցակ մը, ելն): Այս պա-
հանջներու մասին, որոնց թիւը 14ի կը
յանգի, տեղեկագիրը իր կարծիքը կը յայտ-
նէ թէ ինչ պատասխաններ պէտք է տալ:
Հիմնական գաղափարն այն է թէ Ազգը
կ'ընդունի պետութեան վերին հսկողու-

թիւնը հայ վարժարանաց վրայ, բաւական
է որ ճանչցուի Պատրիարքարանի եւ ա-
ռաջնորդարաններու իրաւունքը, եւ ուղ-
ղակի միջամտութիւն չըլլայ, ինչպէս յայ-
տարարած է Տեղապահ Ս. Եւս Կրթական
Նախարարին: Յուանք որ փութոյ պնդու-
թեամբ կը հետախնդուի այս գործը, ընդ-
փոյթ ճշգրտելով անորոշ, առկաին Պաշտօն
կէտերը:

ՏԵՂԱՊԱՀ Ս. ՀԱՅՐԸ վերջացող շաբ-
թուն այցելեց Կրթական նորոնտիր նա-
խարար Իսմայիլ Հոյզը պէյի, եւ շնորհա-
ւորեց անոր պաշտօնը: Նախարարը սիրա-
լիր ընդունելութիւն մ'ըրաւ Տեղապահ Ս.
Հօր, որ առիթէն օգտուելով կարգ մը բա-
յատութիւններ տուաւ Կրթական խնդրոյն
վրայ, շեշտելով մասնաւորապէս թէ Ազգ.
Պատրիարքարանն ոչ մէկ առեւն մերժած է
Կառավարութեան վերին հսկողութիւնը
վարժարաններու վրայ, միայն ուղղակի
միջամտութեան պարագան է որ Պատրի-
արքարանի իրաւանց կը փնտսէ, եւ ասո՛ր
դէմ դիտողութիւն եղած է Պատրիարքա-
րանէն: Նախարար պէյը զո՞ն մնաց Տեղա-
պահ Ս. Հօր խոցատութիւններէն, աւել-
ցնելով թէ այս ըմբռնումով կարելի պիտի
ըլլայ ընդհուպ կարգադրել դպրոցական
խնդիրները: Ն. Սրբազնութիւնն այցելեց
Շէյխ-Իւլ-Իսլամ Մուսա Քեազիմ էֆ. իւս,
որուն հետ երկար եւ առանձինն տեսակ-
ցութիւն մ'ունեցաւ ազգային սեփականու-
թեանց եւ անոնց մանիլիլ նկատուելուն
մասին:

* Տեղապահ Ս. Եւս Կրթական օր նոր դիր
մը պատրաստել տուաւ՝ ուղղուած Շէյխ-
Իւլ-Իսլամ էֆ. ին, Ազգ. սեփականու-
թեանց վերաբերեալ խնդրոց համար, ու-
րոնց մասին խօսած էր իր տեսակցութեանց
միջոցին: Այդ գրին մէջ Ն. Սրբազնութիւնը
կ'ըսէ թէ ազգն արդարութեան գործա-
դրութիւնը կը պահանջէ այն կալուածնե-
րուն համար, որոնց ազգին դրամով զըն-
ուած ըլլալուն յայտնի անդացոյցներ կան:

* Կրթական նախարարն Բչ. օր փո-
խադարձ այցելութեան եկաւ Տեղապահ Ս.
Հօր ի Պատրիարքարան: Տեսակցութեան
միջոցին որ շատ սիրալիր եղաւ, Ն. Սր-

որպէս զի վկայական ունեցող գովիրները ճանչնայ իբր գովիր, և ոչ իբր ընկերակից: — Խառն ժողովին առկէ առաջ քահանայից պատկերասիր խնդրոյն մասին առաւ սրուշումը ցարդ Տնտես. Խորհրդոյ կողմէ գործադրուած չըլլալով, հարկ գատեց Խառն ժողովի այդ որոշման գործադրութիւնը կրկին յանձնարարել:

ԱՌՆԵԻԱՆԳՈՒԹԵԱՆՅ խնդրոյ առթիւ, որ տեղի զենեցան վերջերս Պաշտօնատնի և Շ. Գորահիսարի մէջ, որոշուած է թագրերով գիմել կառավարութեան, և կրոնափոխութեան մասին ընդունուած օրէնքին գործադրութիւնը պահանջել:

ԲԷԹՈՒԱՆՇԱՅԷՆ Առաջն. Տեղապահ Տ. Պարգեւ Վ. Պատրիարքարան կը գրէ թէ «Պաշտօնատնի մէջ 2000է աւելի թուրք խուժան մը կառավարական պաշտօնատուներ տարած է 18 տարեկան Աղաւնի Ոսկանեանը, և հոն իսլամացման ձեւակերպութիւնները կատարուած են: Յետոյ նուազարաններով և ցոյցերով տուն տարած են իսլամացումը աղջիկը, և հետագայում են կառավարիչին: Գորահիսարի ժողովուրդը յուզուած ըլլալով, այցիւս անկարելի է, կ'ըսէ, պաշտօնիս շարունակութիւնը, այս բացարձակ անփութութեան մէջ»:

ԱՆԿԻԻԹԻՈՅ Առաջնորդ Գեր. Տ. Բարգէն Ս. Եպիսկ. Կիւլէսկեան Փետր. 27ի կիրակի օրը քահանայ ձեռնադրած է տեղւոյն Ազգ. վարժարանի ուսուցիչ Տատուր Թօշակեանը, անուանելով զայն Տ. Ասողիկ: Նորինձան, 1879ին ծնած Կեսարիոյ Ֆէնիսէ-Էվէրէկ գիւղին մէջ, 9 տարի ուսուցչութիւն ըրած է այլեւայլ տեղեր: Բարեկոյն ընտանիքի տէր, և հմուտ եկեղծ. երգեցողութեան և հայկ. ձայնագրութեան: Նորապսակ Տ. Ասողիկ քննչ. բարեխոս է որ իր քառասունքի կրթութիւնը պիտի անցընէ Տ. Բարգէն Եպիսկ. փոխան հմուտ եկեղեցականի մը հոկոյութեան տակ: Կը մտնինք ըլլալ «Մշակ առանց ամսօր»:

ՄԵԾ ՀԱՄԵՐԳ

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՆՈՅԻ

Կիրակի, Մարտ 20/2 Ապրիլ, կէս օրէ ետք, ժամ 2 (Լ. Ե.) Բերա՝ Իւնիոն Ֆրանսէզի սրահին մէջ տեղի պիտի ունենայ Հայ գեղջուկ Համերգ՝ զեկավարութեամբ Կամիտաս Վ. Ի և մասնակցութեամբ իր 300 երկսեռ երգիչներուն, ի նպաստ հիմնելի Հայ Երաժշտանոցի, ընդ տեղւոյն թեմա Կամիտաս Վ. Ի:

Երաժշտանոցի նպատակն է պատրաստել կարող երաժիշտներ՝ միաձայն կամ բազմաձայն, եկեղեցական կամ աշխարհիկ երաժշտական գեղարուեստական խմբեր կազմելու և վարելու, որպէս և մասնագէտ երգիչներու և նուագաղջներու ապագայ կատարելագործութիւնը զիւրացնել: Ծանօթ ընտիր կոմպոզիտորներուն վրայ աւելցուած են տաճարի գեղջուկ երգեր եւս: Պիտի երգուին՝ Գութանի, Սայլի, Կալի, Գաղհանի, Կաթ կիթիլու, Սիրոյ, Չաւեշտական, Ծաղրական, Վիպական, Անտուհի, Հարստնեկան, Պարի երգեր, Առակերգ և Քայլերդ:

Յայտագրի իւրաքանչիւր երգի կազմութիւնը՝ բանաստեղծութիւնը, եղանակը և դաշնաւորումը նախ Կամիտաս Վ. հաշիւը կրկնով պիտի վերլուծէ և ապա բացատրութեամբ պիտի երգուին:

Համերգին և տպուած ձեռնոց տետրակի մը ամբողջ հասցիքը յատկացուած է հիմնելի Հայ երաժշտանոցին: Ձեռնոց տետրակը կը բովանդակէ կարճ ներածութիւն մը Հայ գեղջուկ երաժշտութեան կազմութեան մասին, և բոլոր երգուելիքներու բառերը՝ յայտագրին թուակարգով դասաւորուած: Հայ հասարակութեան կողմէ համերգին ցուցուելիք դրական վերաբերմունքը գրաւական մը պիտի համարուի հիմնելի Հայ երաժշտանոցին: Տոմսերը կը ծախուին՝ Բերա՝ Թոգաթիւն Մկրտիչ Էֆ. Ի հաշարանը, և Ղալաթիոյ Եկեղեցւոյն Դպրաց Դատու սենեակը, և համերգի օրը՝ Իւնիոն Ֆրանսէզ: Գին՝ Ա. կարգ՝ թուագրուած, 60 դանեկան, և Բ. կարգ՝ 40 դանեկան:

ՍՏԱՍՈՒԱԾ ԳԻՐԲԵՐ

ՀԱՄԱՊԱՏՈՒՄ.— Չորս Աւետարան-ներուն պարունակութիւնը՝ շարայաբերով, եւ համաձայնելով եւ բացատրելով պատ-մուած.— Պարզաբանեց՝ Մաղաքիա Արե-եպիսկոպոս Օրմանեան, (նախկին Պատ-րիարք).— Հրատարակիչք Վ. եւ Հ. Տ. Ներսէսեան, Կ. Պոլիս, 1911: Գին 25 դշ. լաթակազմ:

1100 ստուար էջերէ բաղկացեալ ըն-դարձակ հատորի մը մէջ նախկին Պատրի-արք Ամեն. Տ. Մաղաքիա Ս. Արքեպ. Օրմանեան տնօրինած, գտաւորած եւ տմ. բողջացուցած է Լոյս կրօնաթերթին մէջ տկուած և յետոյ Արեւելի մէջ շարունակուած յօդուածներու շարքը: Հեղինակին գլխա-ւոր նպատակն եղած է, կերպով մը ժողո-վրդականացնել Աւետարանը, այսինքն հաւատացեալ ժողովրդեան կարողու-թեան, ձեռնահասութեան յարմարցնել, որպէս զի «Աւետարանը ըլլայ իր հոգեկան անունը, բարոյացուցիչ ընթերցումը, եւ հաւատքը զօրացնելու միջոցը»: Հատորին մէջ ընթերցողը պիտի գտնէ ոչ միայն պատ-մական, վարդապետական, գաւառական տեսութիւններ, այլեւ ժամանակագրական, տեղագրական, հոսիոսական, գրչա-դրական եւ լեզուաբանական տեղե-կութիւններ: Անհրաժեշտ հատոր մը ամէն ճշմարիտ կրօնասէրի, մասնաւորապէս եկե-ղեցական պաշտօնէից, եւ մասնաւոր քա-հանայտական դասու ստուար միջամասնու-թեան, որ ատոր մէջ պիտի գտնէ Աւետա-րանները լոմփովող եւ լուսաբանող գիրք մը, ուր պէտք եղածը կը գտնէ առանց այս ու այն կողմ թարթալիլու: Հատորը ճոխացած է երկու բացատրական քար-տէսներով (Պապեստին եւ Երուսաղէմ), եւ երեսունէ աւելի պատկերներով:



H ARMENIKH EKKΛΗΣΙΑ

ΕΞ ΑΠΟΨΕΩΣ ΟΡΘΟΔΟΞΟΥ

Քաղնիոյ (Շապին Գարահասար) Յոյն Մեղրապոլիտ Տ. Պողիկարպոս՝ Հայ եւ Յոյն եկեղեցիներու յարաբերութիւններուն վրայ շահեկան ուսումնասիրութիւն մը հրատա-րակած է այս օրերս: Գրքոյկը բաժնուած է երկու մասերու: Ա. մասին մէջ հեղինա-կը կ'ուսումնասիրէ Հայ եկեղեցւոյ հաւ-տատութիւնը, սկսեալ Թադէոս եւ Բար-թողիմէոս Առաքեալներէն մինչեւ 1179 թուականը: Յարգելի հեղինակը, իբրեւ անկողնաւոր դիտող մը, ուսումնասիրած է երկու եկեղեցիներու յարաբերութիւն-ները, մինչեւ Քաղկեդոնի ժողովրդ: Բ. մասին մէջ, Քաղկեդոնի ժողովին երկու եկեղեցիներու մէջ բացած խրամատը մաս-նաւոր ուսումնասիրութեան առարկայը ը-րած է, ջանալով բառեալ անոր յառաջ բերած յրատարակելը:

Յունադէտ ձեռնհաս աշխատակից մը, որուն յոյնացած է Տ. Պողիկարպոսի հրատարակած հատորը, կը խոստանայ Տաճարի մօտաւոր թիւերէն մէկուն մէջ ընդարձակօրէն խօսիլ այս գործին վրայ:



ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀԱՐԱՅԵԱԿ ԳԶԵՑ ԷԲՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՁԱՐԲԱՅԵ ԳԶԵՑ ԿԷՋՐԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ԴԱՆԹ

Ղալաթիա, ձառի Դարբուռ, թիւ 9

ARMENIA

Ամերիկացի նշանաւոր գրողէաներու եւ գրագիտութիւններու աշխատակցութեամբ Ամերիկայի մէջ կանոնաւորաբար հաստատուած գեղեցիկ պարբերական մը, որ կը պաշտպանէ նաեւ Հայոց շահերը՝ ծանօթացնելով Հայ ազգին գրականութիւնը եւ պատմութիւնը անգլիախօս ժողովուրդին:

Armenia-ն կը պարունակէ անպիտի գրական զնայելի էջեր, որոնք հաւատարմօք կը շահագրգռեն թէ՛ Հայ թէ՛ Ամերիկացի հասարակութիւնը:

Անա՛ թէ ինչ կ'ըսէ Նիւ-Յորք էյմէրիքը հանրածանօթ օրաթերթին գրական բաժնի խմբագրապետը:

—«Armenia-ն, որ Արեւելքի չափ պայծառ ու վճիռ գրականութիւն մը կը ցոլացնէ, կրնայ յաջողակօրէն բազմաթիւ Ամերիկեան գրական Հանդէսներու հետ, պայմանաւ որ վերջիններէն պակսեցուի զիրենք նսեմացնող վաճառանական ոգին»:

Գօլէճներու եւ բաիճրագոյն վարժարաններու մէջ անգլիերէն լեզուի դասընթացքին հետեւող բոլոր գրասէր ուսանողներու ջերմապէս կը յանձնարարուի այս հոյակապ պարբերականը, որուն տարեկան բաժնեդինն է միայն մէկ տուար Ամերիկայի, եւ տուարուէն թուրքիոյ համար:

Դիմել՝ Editor of Armenia

P. O. Box. 209 Madison Square Station

New York City

Ապօրինի ապսպրոնքներ նկատու չեն տանուիր:

Գրիգոր Արծրունիի հիմնած և իր ուղղութեամբ քաջածանօթ սոյն թերթը կը շա-
բաթական հրատարակուի խմբագրութեամբ ծանօթ գրող Պ. Համբարձում Առաքել-
եանի, և գործակցութեամբ կարող աշխատակիցներու: Տարեկան բաժնեգին 10 ռուբլի:
Թուրքիոյ համար 120 դրշ.: Հասցէ TIFLIS, Rédaction du Journal Mschak.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԴէՊ ի ՀԱՅԱՍՏԱՆ. — Ուղեւորութիւն
Բաուլ Ռուպախ գերմանացւոյն. թարգ-
մանց գերմաներէնէ Վ. ձանիկեան. —
Հրատարկ. Բիշտօֆճեան կղբ. «Արամազդ»
գրատան. Կալաթա, Գուլէ Գաթու, թիւ
695: Գին 3¹/₂ դրշ.:

ՀԱՄԱՍՆՈՒՆԴԵՒ ՍԵՂԱՆ Ի ՔԱՌԱ-
ԿԵՐՊՆ. — Պատրաստեց Յակոբ Յ. Ալլան-
վեսեան, հեղինակ «Ուշնիա կամ Զէյթուն»
գրքին որ պատկուած է Սահակ-Մեարտա-
կան մրցանակով: Ներկայ հատորը կը պա-
րունակէ դատարարութեան հարցին,
ազգային օրուան ինդիքներու, հին ու նոր
և ազգայն կեանքի վրայ նորօրինակ տե-
սութիւններ և առաջարկներ: Հեղինակն
իր արգահատելի վիճակով արժանի է քա-
ջուրերութեան: Հասցէ՝ Մեծ Շուկայ, Թէր-
զիպաշի փողոց, թիւ 20: Գին 10 դրշ.:

ԿԵԱՆՔԻ ՆՐԱԳԻՐՆԵՐ. — Կաղմեց Սե-
րովբէ Վրդ. Սամուէլեան. — Իր մէջ կ'առ-
փոխէ Յրանքիւնի, Ռոշիլտի, Կարֆիլտի և
այլ նշանաւոր անձնաւորութեանց կեանքի
ծրագիրները, և ուրիշ կարեւոր նիւթեր:
Հայ պատմիկներու, երկրաւարներու և
ամէն կարգէ և հասակէ գործի աէր մար-
դոց համար անհրաժեշտ և պիտանի գործ
մըն է: Գին 2 դրշ.: Կեդրոնատեղի Զար-
դարեան գրատուն:

«ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՐ». — Վերթոր Հիւ-
կայն աշխարհահռչակ գրողէտին գլուխ գոր-
ծայնէրէն մէկը, որ կրնայ Աւետարան մը
համարուի, եթէ անոր «Թշուառներ»ը
Աստուածաշունչ մըն է, ինչպէս ըսած է
Թուլստայ: Թարգմանութիւն Աւետիս Գու-
յումճեանի, և հրատարակութիւն Պոսթոնի
Ազգ պատուական շաբաթաթերթին: 530
ընդարձակ էջերէ բաղկացեալ հատոր մը:
Գին 1 տուար: Լաթակաղմ 1¹/₂ տուար,
Փառակաղմ 2 տուար:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

ԲՈՂՅՈՋ. — Պատկերազարդ Հանդէս
Ամսօրեայ. — Խմբագրապետ Մամիկոն Վար-
ժապետեան. — Մարգուտնի մէջ սկսած է
հրատարակուիլ, գլխաւոր նպատակ ունե-
նողով քաջալերել սկսնակ գրողները, որոնց
մէջ թաքուն տաղանդներ կրնան զանաւիլ:
Տարեկան բաժնեգին 8 դրշ.: Արատասնան
2 ֆր.:

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ. — Հայագիտու-
կան ուսումնաթերթ, խմբագրութեամբ Վի-
կենայի Մխիթարեանց: Հրատարակուեցաւ
մարտի թիւը: Տարեկան բաժնեգին 15 ֆր.:
Հասցէ՝ Vienne (Autriche) VII² Mechi-
tharislangasse, 4:

ԲԱԶՄԱՎԵՊ, Ամսագիր Ազգային,
Բանասիրական, Գրական, Գիտական. —
Հրատարակութիւն Վենետիկի Մխիթարեանց,
— հրատարակուեցաւ փետրուարի թիւը:
Տարեկան բաժնեգին 10 ֆր.: Հասցէ՝
Rédaction de la revue «Bazmavep»
VENISE (Italie), St. Lazare: